ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 420 - Ա **28 սեպտեմբերի 2016 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻԻ 20-Ի N 259-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի 1-ին պարբերության դրույթներով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2012 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների /տնօրենների/ ընտրության /նշանակման/ մրցութային հանձնաժողովների անդամության թեկնածուների ցուցակը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2012 թվականի մարտի 5-ի N 46–Ա և հոկտեմբերի 8-ի N 200-Ա որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 259-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝ որոշման 1-ին կետով հաստատված հավելվածում՝

1) «Ասատրյան Իվան» բառերը փոխարինել «Գրիգորյան Վաչագան» բառերով.

2) «Խաչատրյան Հայկ – մարզպետի խորհրդական» բառերը փոխարինել «Խաչատրյան Հայկ – մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար» բառերով.

3) տեքստից հանել «Մաթևոսյան Նորիկ – մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի վարիչ»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ